

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔ

«ՎԱՐԿԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ  
ԲՅՈՒՐՈՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հոկտեմբերի 22-ի ՀՕ-185-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածից «լիցենզավորումը» բառը հանել:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «սույն օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով տրված» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով տրված վարկային բյուրոյի գործունեության» բառերով:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 4. Վարկային բյուրոյի գործունեությունը բնութագրող բառերի օգտագործումը

1. Արգելվում է վարկային բյուրոյի գործունեության լիցենզիա չունեցող և այդպիսի լիցենզիա ունեցող անձի մասնաճյուղ (ներկայացուցչություն) չհանդիսացող անձանց կողմից վարկային բյուրոյի՝ սույն օրենքով նախատեսված գործունեությունը բնութագրող բառերի, օտար լեզվով այդ բառերի հայերեն տառադարձությունների, թարգմանությունների կամ դրանց զուգորդությունների օգտագործումն իրենց անվան մեջ, գովազդներում, հրապարակային օֆերտայում կամ որևէ կերպ աջակցելը գովազդելուն, եթե դրանց օգտագործման իմաստից չի բխում որ խոսքը չի վերաբերում վարկային բյուրոյի՝ սույն օրենքով նախատեսված գործունեությանը, և եթե նման օգտագործման իրավունքը չի վերապահվել օրենքով կամ միջազգային պայմանագրով:»:

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 5. Վարկային բյուրոների լիցենզավորումը

1. Վարկային բյուրոյի գործունեության լիցենզավորման կարգը և պայմանները սահմանվում են բացառապես «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով: Այլ օրենքներով լիցենզավորման վերաբերյալ այլ դրույթներ սահմանված լինելու դեպքում վարկային բյուրոների համար գործում են «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները:»:

Հոդված 5. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին»» բառերով:

Հոդված 6. Օրենքի 6-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասում «, սույն օրենքի պահանջներին համապատասխան, չունի Հայաստանի Հանրապետության տարածքում վարկային բյուրոյի գործունեություն իրականացնելու» բառերը փոխարինել «չունի «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն տրված վարկային բյուրոյի գործունեության» բառերով:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո: